ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,

**05/03/2024թ.**

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահին**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 65-րդ հոդվածի 1-ին մասի և 67-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում ««Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»», ««Փրկարար ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Դատախազության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Ագնեսա Խամոյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը,

Առաջարկում եմ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**«ՀԱՅԱՍՏԱՆ»**
**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ** **ԱԳՆԵՍԱ ԽԱՄՈՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-198-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 48-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3-րդ մասով.

«3. Դատախազը պարտավոր է տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:»:

**Հոդված 2.** Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասում

1. Լրացնել նոր՝ 5-րդ կետ.

«5) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելը:»:

2. լրացնել նոր՝ 6-րդ կետ.

«6) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելը:»:

**Հոդված 3.** Օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասում՝

1) «հետ» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով,
2) լրացնել «ընդ որում՝ սույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կամ 6-րդ կետերով սահմանված դեպքերում «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժը ենթակա է պարտադիր կիրառման:»:

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1.** Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանվող դրույթի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը ՀՀ Կառավարությունը սահմանում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### Հոդված 48. Դատախազի պարտականությունները

1. Դատախազը պարտավոր է՝

1) տիրապետել զբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին.

2) կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

3) ապահովել պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ.

4) իր լիազորություններն իրականացնելիս ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը.

5) պահպանել աշխատանքային կարգապահությունը, ինչպես նաև դատախազի վարքագծի կանոնները.

6) պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանել, այդ թվում՝ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո.

7) սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անցնել ատեստավորում և վերապատրաստում.

8) պահպանել սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները:

2. Դատախազն ունի նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

3. Դատախազը պարտավոր է տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:

### Հոդված 53. Կարգապահական պատասխանատվության հիմքերը

1. Դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

2) դատախազի վարքագծի կանոնները կամ շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելը, բացառությամբ սույն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված կանոնի խախտման.

3) աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը.

4) սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելը:

5) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելը:

6) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելը:

### Հոդված 54. Կարգապահական տույժերը

1. Դատախազի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ կարգապահական տույժերը՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով.

4) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

5) պաշտոնից ազատում:

1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված տույժը չի կարող կիրառվել առաջին անգամ դատախազի պաշտոնն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կազմում զբաղեցնող անձանց նկատմամբ: Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պաշտոնների խմբում ընդգրկված դատախազների նկատմամբ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված տույժի կիրառման արդյունքում նրանք չեն կարող նշանակվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կազմում:

2. Կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված կարգապահական խախտման ծանրությանը և մեղավորության աստիճանին:

3. Մեկ կարգապահական խախտման համար դատախազի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ: Մեկ կարգապահական վարույթի շրջանակներում, անգամ եթե նույն դատախազը կատարել է մի քանի կարգապահական խախտում, դատախազի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

4. Կարգապահական տույժի ենթարկված դատախազը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված վարչական կամ քրեական պատասխանատվությունից:

5. «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժը կարող է նշանակվել դատախազի այնպիսի արարք կատարելու դեպքում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը կամ անհամատեղելի է դատախազի պաշտոնի հետ: ընդ որում՝ սույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կամ 6-րդ կետերով սահմանված դեպքերում «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժը ենթակա է պարտադիր կիրառման:

6. «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի և դատախազների նկատմամբ կարող է կիրառվել նաև գլխավոր դատախազի նախաձեռնությամբ կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա, որով հիմնավորվում է նշված անձի կողմից տևական ժամանակ իր գործառույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի հետևանքով ստորաբաժանման առջև դրված նպատակները և խնդիրներն արդյունավետորեն չեն իրականացվել:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» 2003 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-532-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով՝

«4. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև Ազգային ավտանգության մարմինների ծառայողները պարտավոր են տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:»:

**Հոդված 2.** Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում

1. լրացնել նոր՝ 16-րդ կետ՝

«16) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելու դեպքում:»:

2. լրացնել նոր՝ 17-րդ կետ՝

«17) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու դեպքում:»:

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1.** Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանվող դրույթի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը ՀՀ Կառավարությունը սահմանում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ
ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 14. Ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջները**

1. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության կարող է ընդունվել Հայաստանի Հանրապետության մինչև 30 տարեկան (բացառությամբ տեղափոխվածների) այն քաղաքացին, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների, բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտած այն անձանց, ովքեր ուսման ընթացքում անցել են զինվորական պատրաստություն և հանձնել սահմանված քննությունները, հաշվառվել պահեստազորում) կամ օրենքով սահմանված հիմքերով և կարգով ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից և չունի օրենքով սահմանված վերափորձաքննություն անցնելու պարտականություն, տիրապետում է հայերենին, իր գործնական, անձնական, բարոյական հատկանիշներով, կրթությամբ, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու ազգային անվտանգության մարմինների ծառայողի պարտականությունները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Ազգային անվտանգության մարմինների առանձին պաշտոններում ծառայության անցնելու համար լիազոր մարմնի ղեկավարի թույլտվությամբ բացառիկ դեպքերում կարող են ծառայության ընդունվել 30-ից ավելի բարձր տարիք ունեցող քաղաքացիներ:

2. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության անցնելու համար թեկնածուների ընտրության, ուսումնասիրման կարգը, ինչպես նաև նրանց ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

3. Ազգային անվտանգության մարմիններում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար.

4) չի համապատասխանում սույն հոդվածի առաջին մասով սահմանված պահանջներին, կամ ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում.

5) միաժամանակ հանդիսանում է այլ պետության քաղաքացի:

4.Ազգային անվտանգության մարմիններում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև Ազգային անվտանգության մարմինների ծառայողները պարտավոր են տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:

**Հոդված 47. Ազգային անվտանգության մարմինների ծառայողին ծառայությունից արձակելու հիմքերը**

1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողը ենթակա է ծառայությունից արձակման՝

1) տարիքի կապակցությամբ՝ ազգային անվտանգության մարմիններում ծառայության մեջ գտնվելու և սահմանային տարիքի հասնելու դեպքում.

2) օրենքով սահմանված կարգով երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու դեպքում.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ միաժամանակ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում.

4) առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ ծառայության համար ոչ պիտանի կամ սահմանափակ պիտանի ճանաչվելու դեպքում.

5) ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից զբաղեցրած պաշտոնում ծառայությունը շարունակելու համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում, եթե համաձայն չէ նշանակվելու այլ պաշտոնի.

6) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

7) (կետն ուժը կորցրել է 24.11.22 ՀՕ-448-Ն)

8) իր նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

9) հաստիքների կրճատման դեպքում, եթե համաձայն չէ նշանակվելու այլ պաշտոնի.

10) (կետն ուժը կորցրել է 01.03.23 ՀՕ-40-Ն)

11) իր զեկուցագրի հիման վրա, այդ թվում՝ այլ աշխատանքի անցնելու կամ ընտանեկան հանգամանքների կապակցությամբ.

12) կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու դեպքում, եթե համաձայն չէ նշանակվելու առաջարկվող պաշտոնին.

13) համապատասխան կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում.

14) օրենքով սահմանված կարգով իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելու դեպքում.

15) զոհվելու (մահանալու) կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու դեպքում:

16) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելու դեպքում:

17) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու դեպքում:

1.1. Լիազոր մարմնի ղեկավարն իրավունք ունի ազգային անվտանգության մարմիններում ծառայությունից արձակելու դիտավորյալ հանցագործության հատկանիշներ պարունակող արարք կատարած այն ծառայողին, որի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հանգամանքներով: Այս դեպքում լիազոր մարմնի ղեկավարի կողմից որոշում կայացնելու համար անհրաժեշտ հանգամանքները պարզելու նպատակով անցկացվում է ծառայողական քննություն:

2. Ազգային անվտանգության մարմինների ծառայողին ծառայությունից արձակում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավունք ունեցող ղեկավարը:

Ազգային անվտանգության մարմիններից արձակվող ծառայողն արձակվելու օրը ստանում է վերջնահաշվարկ:

3. Ազգային անվտանգության մարմիններում 20 և ավելի տարի (արտոնյալ հաշվարկով) անբասիր ծառայած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանն առանձնակի ծառայություններ մատուցած սպաներին և ենթասպաներին,
անկախ ազգային անվտանգության մարմիններում ծառայության ընդհանուր ժամկետից, արձակելու իրավունք ունեցող ղեկավարի հրամանով կարող է վերապահվել զինվորական համազգեստ կրելու իրավունք:

Ազգային անվտանգության մարմինների բարձրագույն կոչում ունեցող ծառայողները ծառայությունը դադարեցնելուց հետո իրավունք ունեն կրելու զինվորական համազգեստ:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» 2021 թվականի մարտի 24-ի ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ մասով.

«5. Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:»:

**Հոդված 2.** Օրենքի 24-րդ հոդվածի 1-րդ մասը

1. Լրացնել նոր՝ 16-րդ կետով.

«16) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելու դեպքում:»:

2. լրացնել նոր՝ 17-րդ կետով.

«17) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու դեպքում:

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1.** Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանվող դրույթի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը ՀՀ Կառավարությունը սահմանում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### Հոդված 15. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոն կարող է զբաղեցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1) ունի Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով.

2) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ ազատված է նման ծառայությունից օրենքով սահմանված կարգով ու հիմքով.

3) տիրապետում է հայերենին.

4) ունի ռուսերենից, անգլերենից և ֆրանսերենից առնվազն մեկ ստանդարտացված թեստային համակարգով կամ Կառավարության սահմանած այլ կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացություն: Սույն կետի պահանջը չի տարածվում կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձանց վրա.

5) բավարարում է պաշտոնին ներկայացվող սույն օրենքով նախատեսված պահանջները, և առկա չեն պաշտոնի նշանակման համար սույն օրենքով սահմանված սահմանափակումները:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) որը օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) որը դատապարտվել է հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ վերացված լինելու հանգամանքից.

4) որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.

5) որի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ քրեական հետապնդում չի հարուցվել ոչ ռեաբիլիտացնող հիմքով.

6) որն ունի Կառավարության հաստատած ցանկով նախատեսված՝ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացումը խոչընդոտող հիվանդություն կամ ֆիզիկական արատ.

7) որը, լինելով դատավոր կամ նախկին դատավոր, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

8) որը, լինելով դատախազ, քննիչ, նախկին դատախազ կամ նախկին քննիչ, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

9) որը, լինելով հետաքննիչ, օպերլիազոր, նախկին հետաքննիչ կամ նախկին օպերլիազոր, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

10) որը, լինելով փաստաբան կամ նախկին փաստաբան, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական

տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձանց ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է Կառավարությունը (բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ և 12.1-ին մասերի):

4. Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը 60 տարեկանն է: Սահմանային տարիքը լրանալուց հետո հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը կարող է մինչև հինգ տարի ժամկետով երկարաձգել պաշտոնավարման ժամկետը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնների սահմանային տարիքը 65 տարեկանն է:

5. Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները պարտավոր են տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:

## Հոդված 24. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին պաշտոնից ազատելը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը, բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի, պաշտոնից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա, այդ թվում՝ 20 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժը լրանալու կապակցությամբ.

3) սույն օրենքով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ, եթե սույն օրենքով սահմանված կարգով այն չի երկարաձգվել.

4) հաստիքների կրճատման, հակակոռուպցիոն կոմիտեի լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

5) հիվանդության կամ ֆիզիկական արատի պատճառով ծառայությանը ոչ պիտանի լինելու դեպքում.

6) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

7) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա մահացած հայտարարվելու կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

8) եթե նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ քրեական հետապնդում չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով.

9) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճռով օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

10) նրա նկատմամբ պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու դեպքում.

11) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդը.

12) ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին նրա չհամապատասխանելու դեպքում.

13) սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երկու անգամ անընդմեջ անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում.

14) սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի ի հայտ գալու դեպքում.

15) սույն օրենքի պահանջների խախտմամբ պաշտոնի նշանակված լինելու դեպքում:

16) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկականստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելու դեպքում:

17) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու դեպքում:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան դեպքում:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝

1) պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրա անգործունակ, անհայտ բացակայող ճանաչվելը կամ մահացած հայտարարվելը.

4) նրա մահը.

5) նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը.

6) նրա նկատմամբ կայացված՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման առկայությունը.

7) հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից հրաժարականի դիմում Կառավարություն ներկայացնելը և վերջինիս կողմից այն հաստատվելը.

8) հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի կողմից պաշտոնից ազատվելու վերաբերյալ գրավոր դիմում վարչապետին ներկայացնելը և վերջինիս կողմից նրան պաշտոնից ազատելը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

1) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել հիվանդություն կամ ֆիզիկական արատ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պաշտոնեական պարտականությունների կատարումը.

2) ի հայտ է եկել սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկը.

3) նա խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները.

4) նա խախտել է քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը.

5) ի հայտ են եկել փաստեր, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի լիազորությունների ժամկետը լրանում է նրա նշանակման օրվան հաջորդող վեցերորդ տարվա նույն օրը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին մասին» 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածը լրացնել նոր՝ 6-րդ մասով.

«6. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:»:

**Հոդված 2.** Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում

1. Լրացնել նոր՝ 8-րդ կետ.

«8) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելու դեպքում:»:

2. լրացնել նոր՝ 9-րդ կետ.

«9) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու դեպքում:»

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1.** Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանվող դրույթի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը ՀՀ Կառավարությունը սահմանում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

# ՏԵՂԵԿԱՆՔ

**Հոդված 17. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ներկայացվող հիմնական պահանջները**
***(վերնագիրը փոփ. 09.12.20 ՀՕ-494-Ն)***

1. Քննչական կոմիտեում պաշտոնի կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի) կամ պահեստազորի սպա է.

2) տիրապետում է հայերենին.

3) չունի քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն (որոնց ցանկը սահմանում է Կառավարությունը).

4) ընդգրկվել է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում, բացառությամբ քննչական կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալների:

2. Քննչական կոմիտեում պաշտոնի կարող են նշանակվել նաև օրենքով նախատեսված կարգով ու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված անձինք:

3. Քննչական կոմիտեում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին՝

1) որն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) որն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, իսկ անզգույշ հանցագործության դեպքում՝ մինչև դատվածությունը չի մարվել կամ հանվել.

4) որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում.

5) որի նկատմամբ առկա է ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում.

6) որը չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

4. Քննչական կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է 60 տարեկանը: Սահմանային տարիքը լրանալուց հետո քննչական կոմիտեի նախագահը կարող է մինչև 5 տարի ժամկետով երկարաձգել պաշտոնավարման ժամկետը:

5. Քննչական կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալի պաշտոնի սահմանային տարիքը 65 տարեկանն է, որը համապատասխանաբար Կառավարության և վարչապետի կողմից կարող է երկարաձգվել մինչև 2 տարի ժամկետով:

«6. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:»:

## Հոդված 22. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին պաշտոնից ազատելը

*(վերնագիրը փոփ. 17.01.18 ՀՕ-79-Ն, 09.12.20 ՀՕ-494-Ն)*

1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.

2) իր գրավոր դիմումի հիման վրա.

3) սույն օրենքով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ, եթե սույն օրենքով սահմանված կարգով այն չի երկարաձգվել.

4) հաստիքների կրճատման, քննչական կոմիտեի լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

5) հիվանդության կամ ֆիզիկական արատի պատճառով ծառայությանը ոչ պիտանի լինելու դեպքում.

6) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր աշխատանքի չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ երեխային խնամելու համար արձակուրդը:

2. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնից ազատվում է՝

1) նրա նկատմամբ պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու դեպքում.

2) եթե նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով.

3) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

4) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

5) սույն օրենքի պահանջների խախտմամբ պաշտոնի նշանակված լինելու դեպքում.

6) ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին նրա չհամապատասխանելու դեպքում.

7) նրա՝ սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երկու անգամ անընդմեջ անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում:

8) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելու դեպքում:

9) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու դեպքում:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Փրկարար ծառայության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-171-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածը լրացնել նոր՝ 9-րդ մասով.

«9. Փրկարար ծառայությունում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողները պարտավոր են տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:»:

**Հոդված 2.** Օրենքի 61-րդ հոդվածի 1-րդ մասում՝ «Ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան կապակցությամբ:» նախադասությունից առաջ

1. Լրացնել նոր՝ «ժե» կետ.

«ժե) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելու դեպքում:»:

2. լրացնել նոր՝ «ժզ» կետ.

«ժզ) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու դեպքում:»:

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1.** Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանվող դրույթի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը ՀՀ Կառավարությունը սահմանում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## Հոդված 29. Փրկարարական ծառայությունում ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջները, մրցույթը

***(վերնագիրը լրաց. 21.01.20 ՀՕ-19-Ն)***

1. Սույն օրենքով սահմանված կարգով փրկարար ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն փրկարարական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք անցել են պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի կամ այն քաղաքացիների, որոնք օրենքով նախատեսված կարգով և հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից), և դիմելու պահին չի լրացել վերջիններիս 35 տարին: Փրկարար ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) փրկարար ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող փրկարարական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է:

2. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***

3. Առանձին մասնագիտություններով փրկարար ծառայության անցնելու համար կարող են սահմանվել այլ (այդ թվում՝ տարիքային) պահանջներ: Այդ մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված պահանջները սահմանում է Կառավարությունը:

4. Փրկարար ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում մրցույթին կարող են մասնակցել զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության լիազոր մարմինների ծառայողներ, այդ թվում՝ փրկարար ծառայությունից այլ մարմիններ տեղափոխված կամ ազատված ծառայողներ, եթե բավարարում են տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

5. Փրկարար ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, որը անցել է այլընտրանքային զինվորական ծառայություն և (կամ) դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, և (կամ) առկա է «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

6. Բացառությամբ սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 32-րդ հոդվածի 7-րդ և 8.1-ին մասերով սահմանված դեպքերի, մյուս փրկարարական ծառայողները ծառայության անցնում են մրցույթի արդյունքներով: Մրցույթի ժամանակ ստուգվում է մասնակցի մասնագիտական և ֆիզիկական պատրաստվածությունը: Մրցույթի անցկացման <u>կարգը</u> սահմանում է Կառավարությունը:

7. Մրցույթին չեն կարող մասնակցել այն քաղաքացիները, որոնք չեն բավարարում սույն օրենքի 32-րդ և 63-րդ հոդվածների պահանջները:

8. Փրկարարական ծառայողների առաջխաղացումն իրականացվում է սույն օրենքով սահմանված մրցույթի արդյունքների հիման վրա:

<u>9. Փրկարար ծառայությունում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողները պարտավոր են տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:</u>

**Հոդված 61. Փրկարարական ծառայությունից ազատելը**

1. Ծառայողները փրկարարական ծառայությունից ազատվում են՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.

բ) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր զեկուցագրի հիման վրա, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու, պետական այլ ծառայություն տեղափոխվելու, հանրային ծառայության այլ պաշտոններում նշանակվելու կապակցությամբ.

բ.1) պայմանագրով ամրագրված՝ ծառայողի կողմից փրկարարական ծառայության անցման պայմանները և պայմանագիրը խախտելու դեպքում.

գ) ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալու դեպքում.

դ) հիվանդության պատճառով՝ ծառայությանը ոչ պիտանի լինելու մասին բժշկական հանձնաժողովի որոշման հիման վրա.

ե) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

զ) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում կամ կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում.

է) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.

ը) նրանց նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում՝ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից.

թ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում վեց ամսից ավելի ծառայության չներկայանալու դեպքում (բացառությամբ սույն օրենքի 53-րդ հոդվածի երրորդ մասի) չհաշված հղիության, ծննդաբերության և երեխային խնամելու արձակուրդը.

ժ) Լիազոր մարմնի ուսումնական հաստատության կուրսանտին ուսումնական հաստատությունից ազատելու կապակցությամբ.

ժա) սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու դեպքում.

ժբ) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում.

ժգ) պայմանագրի ժամկետը լրանալու կամ պայմանագրի գործողության դադարման դեպքում.

ժդ) սույն օրենքի 34.1-ին հոդվածի 7-րդ, 9-րդ կամ 10-րդ մասերով նախատեսված ժամկետներում սույն օրենքի 34.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորմանը չմասնակցելու կամ սույն օրենքի 34.1-ին հոդվածի 14-րդ մասով նախատեսված ժամկետում ատեստավորմանը կրկին չմասնակցելու կամ ատեստավորման արդյունքով սույն օրենքի 34.1-ին հոդվածի 13-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետով նախատեսված եզրակացության դեպքում:

ժե) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելու դեպքում:

ժզ) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու դեպքում:

Ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան կապակցությամբ:

2. Ծառայողին ծառայությունից ազատում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավունք ունեցող ղեկավարը՝ հրամանում նշելով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ազատման հիմքը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի «ժդ» կետի պահանջները չեն տարածվում Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում սովորող, այդ թվում՝ Լիազոր մարմնի կողմից այլ ուսումնական հաստատություններ գործուղված ծառայողների վրա:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «թմրամիջոցներից» բառը.

**Հոդված 2.** Օրենքի 11-րդ մասը լրացնել նոր՝ 5.1 մասով՝

«5.1 Ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև ոստիկանության ծառայողները պարտավոր են տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:»:

**Հոդված 3.** Օրենքի 42-րդ հոդվածում

1. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Կարգապահական տույժեր կիրառելու իրավունք ունեցող պաշտոնատար անձինք իրավունք ունեն սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված տույժը կիրառելու միայն կարգապահական կոպիտ խախտումների համար, ընդ որում՝ սույն մասի 5-րդ և 9-րդ կետերով սահմանված կոպիտ կարգապահական խախտումը կատարելու դեպքում ենթակա է կիրառման սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը: Սույն օրենքի իմաստով Կարգապահական կոպիտ խախտումներ են համարվում՝»:

2. 3-րդ մասի 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«9) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելը կամ ամենամյա կանխարգելիչ բժշկական քննությունից խուսափելը.»

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1.** Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանվող դրույթի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը ՀՀ Կառավարությունը սահմանում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 11. Ոստիկանությունում ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջներ**

1. Անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ոստիկանությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության 18-ից (բացառությամբ Լիազոր մարմնի ուսումնական հաստատության դիմորդների) մինչև 35 տարեկան այն քաղաքացին, որը՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայությունից ազատվելու դեպքերի).

2) համապատասխանում է ոստիկանության ծառայողին ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստականության և առողջական վիճակի հետ կապված պահանջներին:

2. Առանձին պաշտոններում ոստիկանությունում ծառայության անցնելու համար Կառավարության որոշմամբ կարող են սահմանվել տարիքային ավելի բարձր սահմանափակումներ:

3. Ոստիկանության ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է Կառավարությունը: Ոստիկանության ծառայողին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանվում են Լիազոր մարմնի ղեկավարի հաստատած կոնկրետ պաշտոնի անձնագրով:

4. Ոստիկանությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին՝

1) որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) որը դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

3.1) որը կատարել է դիտավորյալ հանցանքի հատկանիշներ պարունակող արարք, և նրա նկատմամբ առկա է ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում.

3.2) որը նախկինում հանրային ծառայության պաշտոնից ազատվել է կարգապահական տույժի կիրառման արդյունքով, եթե նման տույժի կիրառումից չի անցել մեկ տարի.

3.3) որը տառապում է ոստիկանության ծառայողի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող՝ Կառավարության սահմանած հիվանդությամբ.

3.4) որը օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.

4) որը դատապարտվել է անզգույշ հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ վերացված չէ.

5) որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված անձնական հատկանիշները կարող են ստուգվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

5. Ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև ոստիկանության ծառայողները Կառավարության սահմանած կարգով անցնում են հոգեֆիզիոլոգիական հետազոտություն, թեստավորում՝ ալկոհոլից, ~~թմրամիջոցներից~~ և հոգեմետ նյութերից կախվածությունը ստուգելու նպատակով:

5.1 Ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև ոստիկանության ծառայողները պարտավոր են տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:

6. Ոստիկանությունում ծառայության անցնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը, թեկնածուների ընտրության և ոստիկանությունում ծառայության անցնելու հետ կապված որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

## Հոդված 42. Ոստիկանության ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Սույն օրենքի 42.1-ին հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, օրենքով սահմանված կարգով, ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) 10-50 տոկոսով պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 3 ամիս ժամանակով.

4) ***(կետն ուժը կորցրել է 15.11.10 ՀՕ-169-Ն)***

5) ***(կետն ուժը կորցրել է 17.12.14 ՀՕ-218-Ն)***

6) պաշտոնի իջեցում մեկ աստիճանով.

7) կոչման իջեցում մեկ աստիճանով.

8) ոստիկանությունից ազատում:

Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող տույժերը ձևակերպվում են գրավոր:

2. Կարգապահական խախտման, այդ թվում՝ ուսումնական պարապմունքներից անհարգելի բացակայության, ինչպես նաև պարբերաբար ուշանալու համար Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում սովորողների նկատմամբ, բացի սույն հոդվածի առաջին մասի 1-2-րդ և 7-րդ կետերով նախատեսված տույժերից, կարող են կիրառվել նաև հետևյալ տույժերը.

1) արտահերթ վերակարգի հայտարարում.

2) ***(կետն ուժը կորցրել է 08.12.11 ՀՕ-333-Ն)***

3) ազատում Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունից:

3. ~~Կարգապահական տույժեր կիրառելու իրավունք ունեցող պաշտոնատար անձինք իրավունք ունեն սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված տույժը կիրառելու միայն կարգապահական կոպիտ խախտումների համար: Կարգապահական կոպիտ խախտումներ են համարվում՝~~ Կարգապահական տույժեր կիրառելու իրավունք ունեցող պաշտոնատար անձինք իրավունք ունեն սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված տույժը կիրառելու միայն կարգապահական կոպիտ խախտումների համար, ընդ որում՝ սույն մասի 5-րդ և 9-րդ կետերով սահմանված կոպիտ կարգապահական խախտումը կատարելու դեպքում ենթակա է կիրառման սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը: Սույն օրենքի իմաստով Կարգապահական կոպիտ խախտումներ են համարվում՝

1) քաղաքացիների սահմանադրական իրավունքները ոտնահարելը.

2) ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունները, ծառայողների և այլ անձանց անձնական տվյալներն ապօրինաբար օգտագործելը կամ հրապարակելը՝ փոխանցելը, հաղորդելը, տրամադրելը, առաքելը, ինչպես նաև որևէ ձևով մատչելի դարձնելն այն անձանց, ովքեր այդպիսի տեղեկություններին առնչվելու թույլտվություն չունեն.

3) իր և այլոց համար անօրինական եկամուտներ ստանալու կամ այլ անձնական դրդապատճառներով պաշտոնեական դիրքն օգտագործելը, ինչպես նաև կամայականություն դրսևորելը.

4) ոգելից խմիչքներ օգտագործած վիճակում ծառայության մեջ գտնվելը.

5) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելը.

6) առանց հարգելի պատճառների ամբողջ աշխատանքային օրվա (հերթապահության) ընթացքում ծառայության չներկայանալը.

7) ծառայության վայրում գույք հափշտակելը, գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը.

8) ոստիկանության ծառայողի պատիվն ու արժանապատվությունը արատավորելը կամ նրա նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելը.

9) ~~ծառայողական քննության ընթացքում բժշկական ստուգումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելը կամ ամենամյա կանխարգելիչ բժշկական քննությունից խուսափելը.~~

օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելը կամ ամենամյա կանխարգելիչ բժշկական քննությունից խուսափելը.

10) ղեկավարի (ուղղակի կամ անմիջական) իրավասության սահմաններում տրված հրամանները, ցուցումները, հանձնարարականները երկու կամ ավելի անգամ դիտավորությամբ չկատարելը.

11) սույն օրենքի 39-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի պահանջները խախտելը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»», ««Փրկարար ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Դատախազության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման

### ԱՌԿԱ ԽՆԻԴՐՆԵՐԸ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին թմրանյութերի եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության աննախադեպ աճը, առավել քան անհրաժեշտ է դարձել վերահաստատել և ի ցույց դնել դրա դեմ պետական պայքարի քաղաքականությունը, որի լավագույն դրսևորումը հենց իրավապահ և նախաքննական մարմիններում այդպիսի արգելված միջոցների օգտագործման բացառումն է, իսկ նման արարքների ի հայտ գալու դեպքում՝ համակարգից հեռացումը:

Նախագծով առաջարկվում է որպես թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մարտավարություն դիտարկել հենց թմրանյութերի ու հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում օրենսդրական պարտականությամբ օժտված սուբյեկտների օրինակով նման նյութեր օգտագործելու պարագայում կարգապահական տույժի ամենախիստ տեսակը՝ ազատման ինստիտուտը և նման դեպքերի բացահայտման նպատակով տարեկան երկու անգամ թեստավորումը: Վերոգրյալը հիմնավորվում է նախևառաջ նրանով, որ ցանկացած պարագայում անթույլատրելի է նախաքննական եւ հանցագործությունների դեմ պայքարելու լիազորություններով օժտված մարմինների ծառայողների կողմից թմրանյութերի օգտագործումը:

Ավելին, նման մոտեցումը հիմնված է նաև **միջազգային լավագույն փորձի** վրա:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ.

1. **ԱՄՆ-ում** աշխակիցների ստուգումը թմրանյութերի օգտագործման առարկայով սահմանվել է 1988 թ ընդունված «Թմրանյութերից ազատ աշխատավայրի» ակտով (Drug-Free Workplace Act of 1988): Այս խնդրի կարգավորմամբ զբաղվող մարմինն է Հոգեներգործուն նյութերի չարաշահման և հոգեկան առողջության ծառայությունների գործակալությունը (SAMHSA)[1]: Ընդհանուր առմամբ՝ ԱՄՆ-ում վերահսկվում է թմրանյութերի օգտագործման արգելքը **գրեթե բոլոր աշխատավայրերում,** սակայն պետական ծառայողներին առանձնակի ուշադրություն է դարձվում: Նրանք պարբերաբար անցնում են զանազան հետազոտություններ թմրանյութերի օգտագործման հանգամանքը պարզելու համար: Ստուգման առարկան են

[1] https://www.samhsa.gov/workplace/faqs-federal-drug-testing

մարիխուանան, թեթև և ծանր թմրամիջոցները: Առավել կարևոր ստուգումը վերաբերում է օպիումային միջոցներին, որոնց օգտագործման պարագայում հաճախ հետևում է ազատում զբաղեցրած պաշտոնից: Ինչպես հայտնի է, մարիխուանայի օգտագործումը ԱՄՆ որոշ նահանգներում ապաքրեականացված է, սակայն աշխատակիցները **նշված նահանգներում ևս** հանձնում են անալիզներ մարիխուանայի օգտագործման հանգամանքը պարզելու համար: Անկախ օգտագործվող թմրամիջոցի տեսակից՝ աշխատակիցներին առաջարկվում է անցնել բուժում կախվածությունից ազատվելու համար: ԱՄՆ-ում **պարբերաբար** անցկացվում են թմրանյութերի թեստեր **ոստիկանների** համար: Պատահական կերպով ընտրված ոստիկանները պարբերաբար հանձնում են մազի, մեզի, թքի, արյան անալիզներ: Թեստերի հաճախակիությունը տարբերվում է՝ ելնելով ոստիկանական բաժանմունքի առանձնահատկություններից: Թեստից **հրաժարվող** ոստիկանը կարող է ենթարկվել **կարգապահական պատասխանատվության և կարող է ազատվել աշխատանքից:**

2. **Միացյալ Թագավորության** օրենսդրությունը թույլ է տալիս **բոլոր գործատուներին** ստուգել իրենց աշխատակիցներին թմրանյութերի օգտագործման վերահսկման նպատակով: Թեստերի դրական արդյունքների և թեստ անցնելուց աշխատակցի **հրաժարվելու** պարագայում հետևող պատիժները սահմանում է **գործատուն**: Նշված թեստերը **պարտադիր չեն**, և դրանց անցկացման համար **անհրաժեշտ է աշխատակցի համաձայնությունը**: Հիմնականում թեստավորումը տեղի է ունենում, երբ կա կոնկրետ կասկած, և երբ թմրանյութերի օգտագործումը անհամատեղելի է տվյալ աշխատակցի գործառույթների և պարտականությունների կատարման հետ: **Առանձին կարգավորում պետական պաշտոնյաների համար նախատեսված չէ**: Հարկ է նշել նաև, որ Մեծ Բրիտանիայում անձի կողմից թմրանյութերի օգտագործումը և համապատասխան թեստի արդյունքներն իրենցից ներկայացնում են **գաղտնի անձնական տվյալներ, որոնք հրապարակման ենթակա չեն:**

3. Շվեդիայում մինչև 1980-ական թվականները չկար թմրանյութերի դեմ պայքարի գործուն ռազմավարություն: Թեև օրենքով սահմանված էր պատիժ թմրանյութերի օգտագործման և տարածման համար, սակայն օրենքի գործողությանը խիստ չէին հետևում: 1993 թ. օրենքում կատարված լրացումների համաձայն՝ ընդլայնվեց ապօրինի նյութերի շրջանակը և սահմանվեց վարչական և քրեական պատասխանատվություն (մինչև 6 ամիս) թմրանյութերի օգտագործման և շրջանառության համար: Չնայած որ ոստիկանը կարող է յուրաքանչյուր կասկածելի քաղաքացուց պահանջել հանձնել թմրանյութի թեստ, իրենք ոստիկանները ստիպված չեն այն

հանձնել: Սակայն եթե պարզվում է, որ ոստիկանը օգտագործել է արգելված թմրամիջոց, նա ազատվում է աշխատանքից:

4. **Եգիպտոսում** 2019թ. ընդունված օրենսդրությամբ նախատեսված է թմրանյութերի օգտագործման հանգամանքը բացահայտելու նպատակով **պարտադիր թեստավորման** պահանջը **պետական սեկտորի, առողջապահական, սոցիալական և տրանսպորտի ոլորտների աշխատակիցների համար**: Անալիզը իրենից ներկայացնում է ժամանակակից տեխնոլոգիա, որի կիրառմամբ կարելի է 20 րոպեի ընթացքում պարզել 21 արգելված նյութերի օգտագործման փաստը: Տրանսպորտի ոլորտի այն աշխատակիցները, ովքեր թմրամիջոցներ են օգտագործել, անհապաղ կազատվեն աշխատանքից: **Պետական ծառայողներին** առաջարկվում է անցնել **բուժում, հակառակ պարագայում՝ նրանք նույնպես ազատվում են աշխատանքից**: **Աշխատանքից ազատվում են նաև այն պետծառայողները, ովքեր հրաժարվում են ենթարկվել թեստավորման:** Առանձնակի ուշադրություն է դարձվում կրթական և առողջապահական ոլորտներին:

5. **Ֆիլիպիններում** պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պետության կողմից վերահսկվող ոչ պետական կառույցի յուրաքանչյուր աշխատակից, կամ անձ, ով ցանկանում է սովորել քոլեջում կամ համալսարանում, պետք է անցնի **պարտադիր զննություն** թմրանյութերի օգտագործման հանգամանքը պարզելու համար: Յուրաքանչյուր դիմումատու, ում թմրանյութի անալիզի պատասխանները **դրական է, այսինքն հաստատվում է թմրանյութ օգտագործելու հանգամանքը, չի կարող ընդունվել աշխատանքի կամ լինել ուսանող**: Այս հետազոտությունը **պարտադիր** է նաև գործունեության վերոնշյալ տեսակների վարման ընթացքում: Հետագա թեստերի հաճախականությունը սահմանում են շահագրգիռ գերատեսչությունները՝ ի թիվս այլ գործոնների հաշվի առնելով պետական պաշտոնյաների և աշխատողների թիվը, նրանց աշխատանքի բնույթը, ֆինանսավորումը և այլ հանգամանքներ: Հետագա անակնկալ փորձարկումները պետք է անցկացվեն երկու տարին չգերազանցող պարբերականությամբ: Նշված կառույցները պետք է անցկացնեն թմրամիջոցների թեստերը՝ համաձայն Վտանգավոր թմրամիջոցների խորհրդի կողմից սահմանված ընթացակարգերի, որոնց նրանք պետք է ծանոթացնեն իրենց անձնակազմին:

Ընդ որում՝ օրենսդրությամբ սահմանված են թեստավորման հիմնական պահանջներ՝

- *Թեստը պետք է իրականացվի Թմրամիջոցների փորձարկման պետական լաբորատորիայի կամ այնպիսի լաբորատորիայի կողմից, որը պատշաճ կերպով լիազորված և հավատարմագրված է Առողջապահության նախարարության կողմից:*

- *Պատահականության սկզբունքով ընտրված հետազոտվողները լրացնում և ստորագրում են հատուկ ձևաթուղթ:*
- *Դրական արդյունքով թեստերի նմուշները նույն օրվա ընթացքում պետք է ներկայացվեն վերահաստատող փորձարկման:*

**Թեստի անցկացումից հրաժարվող** քաղաքացիները ենթարկվում են **վարչական պատասխանատվության** անհնազանդության հիմքով (**նրանց գործունեությունը կասեցվում է**): Դրական արդյունքներով թեստի մասին անմիջապես տեղեկանում է կառույցի ղեկավարը: Այնուհետև դրական պատասխանով թեստ հանձնած աշխատակիցը ունի 15 օր ժամանակ՝ վիճարկելու թեստի արդյունքը: Կրկնակի թեստը անցկացվում է նույն պայմաններով: Անկախ թեստի արդյունքներից՝ դրանց մասին հավաստող փաստաթուղթը կցվում է աշխատակցի անձնական գործին: **Թեստի արդյունքները գաղտնի են և ենթակա չեն հրապարակման:** Կախվածության աստիճանից ելնելով՝ նախատեսված են հետևյալ միջոցառումները.

| **Կախվածության աստիճանը** | **Թեստի դրական արդյունքին հետևող քայլերը** |
|---|---|
| Փորձարկող | Ամբուլատոր խորհրդատվություն 6 ամիս տևողությամբ, որն իրականացվելու է աշխատակցի միջոցներով |
| Պատահական օգտագործող | Ամբուլատոր խորհրդատվություն և թեստերի պարբերական անցկացում 6 ամիս տևողությամբ, որոնք իրականացվելու են աշխատակցի միջոցներով |
| Քրոնիկ օգտագործող / թմրանյութից կախվածություն ունեցող | Առնվազն 6 ամսվա բուժում և վերականգնում Կառավարական վերականգնողական կենտրոնում կամ համապատասխան թույլտվություն ունեցող կենտրոնում |

Աշխատանքային ժամին ստուգումների, բուժման և վերականգնման համար ծախսված ժամանակը հանվում է աշխատակցի արձակուրդային ժամանակից: Արձակուրդային ժամանակի սպառված լինելու դեպքում՝ աշխատակիցը համարվում է արձակուրդում, սակայն դրա համար սահմանված վարձատրություն չի ստանում: **Փորձարկողները և պատահական օգտագործողները**, որոնք խորհրդատվությունների և կանոնավոր անցկացվեղ թեստերի արդյունքում ճանաչվում են **կախվածություն չունեցող**, ղեկավարի կողմից ստանում են հատուկ վկայական: Թեստի անցկացումից հետո 15 օրվա ընթացքում սկսվող վերականգնողական գործընթացի ծախսերը հոգում է աշխատակիցը: Վերականգնողական գործընթացից հետո աշխատավայր վերադարձող աշխատակիցը գործատուին հանձնում է վերականգնողական միջոցառումներն ավարտելու մասին հատուկ փաստաթուղթ: **Վերականգնումը պատշաճ կերպով չանցնելու, վերականգնողական գործընթացի ժամանակ թմրանյութեր**

**օգտագործելու, կրկնակի թեստավորումից հրաժարվելու** պարագայում աշխատակիցները ենթարկվում են **վարչական պատասխանատվության՝** որպես լուրջ զանցանք կատարածներ (**ազատվում են զբաղեցրած պաշտոնից**):

Բացի վերոգրյալը՝ ներկայացնում ենք նաև առավել համառոտ կարգով համանման կարգավորումների առնչությամբ միջազգային փորձ.

**Պետությունների ընդհանուր ցուցակ**

| **Պետություն** | **Պաշտոն** | **Առկա կարգավորման օրենսդրական ձևակերպումը** | **Անալիզ** | **Պատասխանատվություն** |
|---|---|---|---|---|
| Ղազախստան | Պետծառայողներ, զինծառայողներ | - | Պլանային հետազոտություն, մեզի անալիզ | Ակնկալվում է, որ պատիժ չի հետևելու: Նշվում է, որ թմրամոլները հանցագործ չեն և ունեն բուժման կարիք: |
| Ռուսաստան | Պատգամավորներ, սենատորներ, դաշնային նախարարներ, Ներքին գործերի նախարարության ծառայողներ | - | Համակարգային թեստավորում, մազի անալիզ | ՆԳՆ աշխատակիցները ազատվում են աշխատանքից |
| Վրաստան | Հանրային ծառայողներ, ոստիկաններ | Անցնում են ստուգում աշխատանքի անցնելիս: Նրանք չպետք է ունենան կախվածություն I և II խմբի նյութերից (թմրանյութեր): | Տարբեր տեսակի պարտադիր անալիզներ | Չեն ընդունվում աշխատանքի, ազատվում են աշխատանքից: |
| Եգիպտոս | Տեղական և նախարարական մակարդակի | Անցնում են ստուգում աշխատանքի | Biochip Array Technology | Չեն ընդունվում աշխատանքի, կարող են ազատվել |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պետծառայողներ, տրանսպորտի, սոցիալական և առողջապահական ոլորտի աշխատակիցներ | անցնելիս, պաշտոնի բարձրացումից առաջ, պայմանագիր ստորագրելուց առաջ: | (BAT), Տեխնոլոգիան թույլ է տալիս պարզել 21 նյութի առկայությունը մարմնում: | աշխատանքից, եթե հրաժարվեն բուժվել: |
| ԱՄՆ | Պետական ծառայողներ (դաշնային և տեղական մակարդակների), պետական դրամաշնորհային ծրագրերից օգտվողներ, ոստիկաններ | Համաձայն 1988 թ" ընդունված օրենքի՝ դաշնային և տեղական մակարդակի պետական կառույցները պետք է ապահովեն թմրանյութերից ազատ աշխատատեղեր: Սա նշանակում է պարտադիր թեստերի պարբերական անցկացում՝ թմրանյութերի օգտագործման հանգամանքը պարզելու համար: | Տարբեր տեսակի անալիզներ, ներառյալ մազի, մեզի, արյան, թքի : | Չեն ընդունվում աշխատանքի, չեղարկում են աշխատանքային պայմանագիրը և ազատվում աշխատանքից, վճարում են տուգանքներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մեծ Բրիտանիա | Յուրաքանչյուր աշխատակից (պետական և ոչ պետական), ոստիկաններ | 1974 թ. ընդունված «Աշխատավայրում առողջության և անվտանգության» ակտը սահմանում է, որ յուրաքանչյուր գործատու կարող է աշխատակցից պահանջել կենսաբանական օրինակներ թմրանյութերի օգտագործումը պարզելու նպատակով: | Տաքեր տեսակի անալիզներ, ներառյալ մազի, մեզի, արյան: | Օրենքով աշխատավայրում անցկացված ստուգումների արդյունքում պարզված տվյալների հիման վրա որևէ առանձին պատիժ սահ-մանված չէ, հարցը կարգա-վորվում է թմրանյութերի դեմ պայքարի մեծբրիտա-նական ընդհանուր քաղա-քականության շրջանակ-ներում: Նշվում է, որ նույնիսկ այն պարագայում, երբ աշխատանքային պայմանագրով նախա-տեսված է աշխատա-կիցների ստուգումը, նրանք կարող են հրաժարվել թեստավորումից: |
| Ֆիլիպիններ | Պետական բոլոր կառույցների աշխատակիցներ | Աշխատանքի անց-նելիս և աշխատանքի ընթացքում պարբերաբար հանձնում են անալիզներ թմրանյութերի օգտագործումը պարզելու նպատակով: | Համակարգային հետազոտություն | Չեն ընդունվում աշխատանքի, կրկնակի օգտագործման դեպքում ենթարկվում են վարչական պատասխանատվության լուրջ զանցանք կատարելու համար, ազատվում են զբաղեցրած պաշտոնից: |

**ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.**

Նախագծով առաջարկվում է ՀՀ ՆԳՆ Ոստիկանության, Փրկարար ծառայության, ՀՀ ԱԱԾ և ՊՊԾ ծառայողների, ՀՀ Քննչական և Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև դատախազների համար սահմանել թմրանյութերի և

հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով տարեկան 2 անգամ ստուգման պահանջ: Նախագծով նաև հստակ սահմանվել է, որ թմրանյութեր կամ հոգեմետ նյութեր օգտագործելը կամ վկայակոչված պարտադիր ստուգումից հրաժարվելը հանդիսանում է վերջիններիս ծառայությունից ազատելու հիմք:

## ՆԱԽԱԳԾՈՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Նախագծի ընդունմամբ նախատեսվում է մի կողմից բարձրացնել հասարակության վստահությունը իրավապահ և նախաքննական մարմինների նկատմամբ, մյուս կողմից բացառել նման կարևորագույն լիազորություններով օժտված պետական մարմիններում կամ դրա աշխատակիցների կողմից թմրանյութերի և կամ հոգեմետ նյութերի օգտագործումը:

## ՆԱԽԱԳԾԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագծի ընդունմամբ հետապնդվող նպատակին հասնելու համար կարծում ենք, որ առավել նպատակահարմար է, որպեսզի Կառավարությունը նախագծով սահմանված կարգը ընդունելիս դրա կիրառման մեթոդ դիտարկի պատահականության սկզբունքով ստուգում անցնող անձանց ընտրությունը, որպեսզի ստուգվող անձը նախքան այդ որևէ կերպ տեղեկացված չլինի գալիք ստուգմանը իրեն ներգրավվելու մասին: Այս սկզբունքի կիրառման արդյունավետությունը հատկապես ապացուցվում է թմրանյութերի և հոգեմետ դեղերի օգտագործման հայտնաբերման փաստի՝ արգելված միջոցների տեսակներով պայմանավորված ժամանակագրական տարբերությամբ:

Հաշվի առնելով, որ նույն նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտ են դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերի ընդունում, մեր կողմից անցումային դրույթներով սահմանվել է դրանց մշակման և ընդունման համար ողջամիտ ժամանակահատված: